քի տակ։ Այսչափը ասենք, որ, եթէ մեր յիշողութիւնը մեզ չէ դաւաճանում, 19-րդ դարի 50-ական թուականների վերջին եւ 60-ական թուականների սկզբին Ստեփանոս Նազարեանց եւ ուրիշներ հայութեան թիւը ողջ Ռուսաստանում հաշւում էին շուրջ 500 հազար։ Յայտնի են վերջապէս հայութեան եւ կովկասեան միւս ժողովուրդներին վերաբերեալ 1886-ի թուական տուեալները, որ կազմուել են ժամանակի իշխանութեանց ձեռքով, ընտանեկան ցուցակների հիման վրայ։ Դրանք մեզ ասում են, որ այդ՝ 1886-ին Անդրկովկասի հայութեան թիւր եղել է 979,131։

Եւ պէտք է ասել, որ 1886-ի թուական տուեալները, նախայեղափոխական շրջանին համար, 1897-ի տուեալներից յետոյ համարւում են բաղդատաբար ամենից աւելի վստահելիները եւ առհասարակ նկատի են առնւում վիճակագրական աշխատանքների ժամանակ։

Իսկ պատերազմի նախօրեակին (1914 թ.), հայութեան թիւն էր Անդրկովկասում, ըստ «Կովկասեան Օրացոյց»-ի 1,685,936։

Ինչ վերաբերում է վերջին տարիների թըւերին, արդէն իսկ յիշատակեցինք 1926-ի վիճակագրութեան արդիւնքները, գոնէ որ չափով որ յայտնի է դարձած մինչեւ այժմ։

Տեսանք արդէն, որ տակաւին պակսում են այդ վիճակագրութեան արդիւնքները ըստ ազգութեանց։ Սրանց ժամանակաւորապէս եւ մասամբ փոխարինել կարող են 1921–1925 թըւականներին բոլշեւիկների կողմից հրատարակուած վիճակագրական մասնակի տուեալները։ Այսպէս, դրանք մեզ ասում են, որ 1922-ին հայերի թիւը ամբողջ Անդրկովկասում եղել է 1,489,175, որից միմիայն Հայաստանում՝ 781,111։

1923-ին Հայաստանի բնակիչների թիւը հաշւում էին 841,043։

1924-ի տուեալներով էլ, Անդրկովկասի հայութեան թիւը եղել է 1,352,000։

Նոյն թուականին Հայաստանի ամբողջական բնակչութիւնը կազմել է 907,755։ Դրանից հայեր՝ 783 հազար, թուրք-թաթարներ՝ 90 հազար, ռուսներ՝ 18,480, եզիդիներ՝ 13 հազար, եւայլն։

Ընթերցողը տեսաւ, որ բոլշեւիկների — ընդամէնը մի քանի տարուայ ընթացքում հրատարակած — թուերը նախ բաւական հակասական են իրար հետ բաղդատելով եւ երկրորդ՝ միեւնոյն տարիների համար ցոյց տրուած տուեալների շուրջը պաշտօնական զանազան աղբիւրները ո՛չ միշտ յար եւ նման են։ Հազարների, չասելու համար հարիւրների, տարբերութիւններ մի՛շտ կը գտնէք դուք, միեւնո՛յն վիճակագրութեան վերաբերեալ։

Երբ վերջապէս յայտնի կը դառնան 1926ի վիճակագրութեան արդիւնքները ըստ ազգութեանց, երեւի բաւական բան էլ կը պարզուի թուական այդ խառնաշփոթութեանց մէջ։ Ցամենայն դէպս, եղածները ուզենք-չուզենք նըկատի պիտի ունենանք այն ընդհանուր համոզումով, թէ 1926-ի մասնակի տուեալների քով՝ քիչ-շատ վստահելի է նաեւ 1921–23-ին ամբողջ Անդրկովկասում կազմակերպած գիւղատնտեսական վիճակագրութիւնը, որի արդիւնքները ամփոփուած են ռուսերէն լոյս տեսած «Զակավկազիէ» (Անդրկովկաս) պաշտօնական հատորի մէջ։

Համաձայն այս վերջինի էլ՝ Հայաստանը 1922–23-ին ունեցել է 781,011 բնակիչ, Վրաստանը նոյն 1922–23-ին՝ 2,448,033 բնակիչ, իսկ Ադրբէջանը 1921-ին՝ 1,773,891 բնակիչ։

VI

Այժմ ամփոփենք հայութեան մասին առաջ բերած թուական կլոր տուեալները զանազան ժամանակաշրջաններում, ինչ, նախ եւ առաջ, ամբո՛ղջ Անդրկովկասին է վերաբերում։

1828-ին, պարսիկ-ռուս պատերազմի տարիներին (?) փոխանցման միջոցին	237,000
1838-ին	295,000
50-ական 60-ական թուականներին	500,000
1886-ին	939,000
1897-ին	1,086,000
1914-ին	1,685,000
1922-ին	1,489,000
1924-ին	1,352,000

Կրկնենք նորից, որ վերջին՝ 1926-ի վիճակագրութեան ազգային տուեալները տակաւին յայտնի չե՛ն։

Այժմ տեսնենք, որչափ ի հարկէ հնարա-